

Արևո

ԱՄԱՍԱԳԻՐ

ԿՐՈՆԱԿԱՄ - ԳՐԱԿԱՄ - ԲԱԼԱԿՐԱԿԱՄ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԳՐԻՆ ԵՐԱԿԱՆԱԿԱՐ ՀԱՅ ՊԱՏՐԻՎԵՐԱԿԱՔԵՐՆ



ՓԱԿՈՒՄՆ ՅՈՒԵԼԻՆԱԿԱՆ ՏՈՐԻԾ

Ֆ. ԴԱՐՈՂԱՐՁԻ ՆՈՀԱՏՈՎՈՒԹԵԱՆ ՍՐՋԱՎՈՐԻՆԱՅՑ ԶՈՐԱՎՈՐԱՅՆ ՄԵՐՈՅ
ՀԱՅԱՐ ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ԳԵՂ ԳԿԱՅԻՑՆ

ՅՈՎԱՆԻ ԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՐԱԴԱԿԱՆ		
— Եամոնշի ողին սփյուռքի ներս (1).		81
ԿՐՈՆԱԿԱՆ		
— Թառութ Մարդութիւնը .	Ե.	86
ԲԱՐԱՍՏԵՂԾԱԿԱՆ		
— Վարդանի Սիրտը (2).	ԵՎԱՆԱՐԴԻ	89
— Տեսիլ - Ներկան .	ՃԵՆ - ՄՈՀ	91
— ԱՌ Անուելներ .	ԱՐԱԿԵ ԿՐԱԿԹ	92
— PARADOX .	Մ. ՄՈՒՇՈՒԿԵՐԱՆ	92
— Քառենակներ .	» »	92
— (Խամազ) .	» »	93
— Խ Խացուցի ծաղիկին .	» »	93
ԲԱՆԱՀԱՄԲԵԿԱՆ		
— Ասաբղոնի հատուածակողմը .	ԱՆՈՒԾՈՒԹԵՆ ԱՅՋ. ԶԳՁԱՆԵԱՆ	94
ՊԱՏՄԱԿԱՆ		
— Եղիչ պատմագիր Եւ Վարդանաց պատե- ռազմը (11) .	ՊԱՐԳԵԿ Վ.ՐԴ. Վ.ՐԹԱԿԵՑԵԱՆ	100
ՀԱՅՐԵՆԱԿԱՆ		
— Նույ. Տ. Եղիչ Ա. Արք. Տերեւեանի (Եղիվարդ) (Փախան Շնորհաւորամի) .	Ն. ՅՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ	103
ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ		
— Սամանին .	Ն. ԵՊՈ. ԾՈՎԱԿԱՆ	106
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԲԱՐ		
— Իրե Եւ յարաբերութիւնն Հայ Եկեղեցւոյ .	ՇՈՒՐՈՒ Վ.ՐԴ. ՍԱՀԱԿԵԱՆ	108
Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԻՆ		
— Եկեղեցական - Բեմական .		111
— Պատօնական .		112
— Դեր. Տ. Սերովիք Վ.ՐԴ. Մանուկեան՝ Նուիրակ Ա. Արուոյն Հարուային Ամերիկայի .		112
— Հոգ. Տ. Յարութիւն Վ.ՐԴ. Մուսեան՝ Հոգեւոր Հովին. Պուենոս Այրեսի .		112

ՍԻՐՆԻ Տարեկան բաժնեզինն է՝ բոլոր Երկիրներու համար՝ Ա.Յ.ՋԼ. Շիլին 15

Redaction of the Armenian Monthly SION
 Armenian Patriarchate,
 P. O. B. 4001
 Old City - Jerusalem
 Via Amman (Jordan)

—= Ս Ի Ռ Ա =

ԽԶ. Տ Ա Ր Ի — Ն Ո Ր Շ Բ Ձ Ա Ն

1952

≈ Ա Գ Ր Ի Լ ≈

Թ Ի Ւ 4

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՆԱՀԱՆՉԻ ՈԳԻՆ ՍՓԻՒՐՁԵՆ ՆԵՐԱՅ

Գ.

Եթէ ուղենք ախտանշել ծանօթ պատճառները այս ողբերդութեան, չայ Սփիւռքէն ներս, անոնք կ'ածանցին անտարակոյս մասամբ արտաքին և մեծաւ մասամբ ներքին շարժառիթներէ: Արտաքին շարժառիթներուն զիսաւորը պէտք է նկատել այն արհաւիրքն ու զարնուրանքը զոր արդար մեր ժողովուրդը ապ. բեցաւ, կամ աւելի ճիշտը ապրելու հարկադրեցին զինքը շուրջ երեսուն հինգ տարիներ առաջ: Մեր հողին չէ պազած դեռ թափուած արիւնէն հարազատներու և մեր աչքերը կը պահեն սահմուկեցուցիչ տեսարանները մեծ եղեռնին, զայն երբեք չկարենալ մարսելու աստիճան:

Յետոյ մեր ճակատազիրը զմեզ վերածած է զաղութային կղզիախումբի մը, Մայր Հայրենիքէն դուրս, իրարմէ բաժնուած բազմաթիւ անջրապետներով, օտար և խորթ ազգեցութիւններու մաշումին ենթակայ, տակաւ խորելով մեր ազգային ներքին նմանութիւնը յօրինող ազգակները, և մենք հարկին ներքեւն ենք մօտ ապազային զիրար չհասկնալու աստիճան Բաբելոնեան վիճակի մը ենթարկուելու:

Մեր ներկայ երիտասարդ սերունդը այս տխուր ելքին հեռապատկերը չունի իր հողիին խորը, չունենալուն համար իր ազգային զիտակցութեան էութիւնը: Ազգասիրական զգացումը շփոթեցնող արեւածաղի մը պէս կը յուսազգը պրասահմանեան մեր զաղութները, և անոնց զոյութեան հարցով մտալիկուող հողիները: Սակայն ազգասիրական զգացումը և հայ կարենալ մնալու ապահովութիւնը իրարմէ բոլորովին տարբեր իրողութիւններ և կարելիութիւններ են: Հետեւաբար չի բաւեր հայ մնալ ուղելը միայն զգացումով և զիտակցութեամբ, ինչ որ կը յաւակնի ունենալ մեր նոր սերունդը, այլ զայն պէտք է իրազործել երրի շօշափելի իրողութիւն մեր վաղուան պատմութեան մէջ:

Մեր պատմութիւնը կարենալ շարունակելու հարցը զոյութեան հասկնալի

(*) Դարձնակութիւնը Ա. Ե. Բ. Խմբագրականներու, տեսնել 1951-ի նոյեմբեր եւ Դեկտեմբեր ամիսներուն:

պայքարը չէ այլիս, ցարդ մեր մղած պայքարներու նման, անիկա աւելի ծանր է ու ճակատազրական, վասնզի բազմաթիւ մութ և կոյր ուժեր կը միջամտին, ոչ միայն անկարելութեան վերածելու չափ մեր այդ ոգորումը, այլ սպաններու մեր գիմագրութեան բնագն ու կորովը, որ տուեալ պայմաններու մէջ մեր ուժերուն անհամապատասխան կը մնայ կարծես, արզիլելու համար օտարացման աւերիչ զանը: Եթէ տակաւին մինչեւ երէկ, թիւը մեզ կը շահազրդուէր, մեր մնացորդացը, այսօր այդ շատցած մնացորդացին ամբողջական կորուստին հարցն է որ գմեզ ուժզնօրէն կը մտահովէ:

Ոիշտ է թէ ապրուստին հզը, միջավայրին յարմարելու անզգալի հարկադրանքը կը տկարացնեն սփիւռքի հայուն մէջ որոշ չափով ինքնապահապանման ընալդը, և հակառակ կրթական, մշակութային և կուսակցական երեսներուն վրայ ի գործ դրուած ճիպերուն, Հայ զաղթաշխարհը տակաւ կը նահանջէ այն արժէքներէն, որոնք գեռ երէկ մեր անձեռնմխելի առաքինութիւնները կը կադմէին: Միւս կողմէն վատահ ենք թէ զիտակցուած և ազգովին հետապնդուած քանի մը անփոխարինելի և հզօր սկզբունքներ մեզ կընան ազատազրել, լինել-չլինելու այլս ճակատազրական այս տագնապէն:

Սփիւռքի հայութիւնը իրեկ քանակ, որակ և կարելիութիւն արհամարհելի չըլլալով հանդերձ, հանդերձուած չէ միս մինակ իրացնելու իր ազգապահապանման գործը, երկարածզելով իր գոյութիւնը հեռաւոր ապազայի մը համար, ինչ որ զաղթաշխարհի հայութեան զերազոյն նպատակն ու բաղձանքն է իր մութ ու ցուրտ օրերու այս մղաւանջին մէջէն:

Մեր գոյութեան ապահովութիւնը կը պայմանաւորեն զաղթաշխարհի մէջ, միայն ու միայն զիտաւոր երկու ազգակներ, Հայ Եկեղեցին և Հայրենիքի զալափարը, մին իրեկ մօտաւոր նպատակ և միւսը իրեկ կարելի իտէալ: Այսինքն մէկին անմիջական ապահովութիւնը և միւսին վաղուան յոյն ու հաւատքը երկու խօսուն իրողութիւններ պէտք է նկատուին մեր կեանքին մէջ, անկորուստ պահել կարենալու համար սփիւռքի հայութիւնը իր վաղուան ի խնդիր:

Այս Եղերէն յաճախ կրկնած ենք, ու նորէն չենք դադրիր շեշտելէ թէ անցեալ մը չէ միայն. Հայ Եկեղեցին, ինչպէս անցեալ մը չէ հայ ժողովուրդը, հայ արուեստն ու մշակոյթը: Հայ Եկեղեցին հայ զի՞ն է, հայ ճարտարապետութիւնը, հայ երաժշտութիւնը, հայ ծէսը, հայ աւանդութիւնը, հայ զրականութիւնը, ինչպէս երէկ այնպէս ալ այսօր: Եւ այս բոլորը տակաւին երէկ Հայ Եկեղեցւոյ կալուածին մէջ, իսկ այսօր միայն իրմով պայմանաւոր, անհաշտ թշնամիներ են բաժանումի, ուժացումի, այլասերման և մեկուսացումի:

Մեր ազգային և եկեղեցական կեանքը այնպիսի սեռն ու սերտ առէջ-ներով թէզանուած է մեր պատմութեան և մեր հողիին մէջ, որ ոչ միայն գիւրին չէ զանոնք իրարմէ քակել, այլ նաև անջատաբար ըմբռնել, վասնզի անոնք ինչպէս անցեալի մէջ, այնպէս ալ այս օրերուն զատորոցուած երեսներ և զործունէութիւններ ըլլալէ աւելի՝ զիրար ամբողջացնող և իրարմով սնտծողեկան ուժեր և դրութիւններ եղած են և կը մնան:

Որքա՞ն նման են այդ շրջանները մեր օրերուն, երբ Հայ Եկեղեցին իր կրօնական գերէն զատ կը սփիպուէր կատարել մօակութային ու հաղաքական գերեր ևս, ծառայելով մեր ինքնապաշտպանութեան և ազգային դոյութեան

խարիսխ, հազար հինգ հարիւր տարիներ շարունակ։ Հայ պատմութեան ներքին ի իմաստը այս պայքարին մէջն է որ կը կայանայ, որուն դերագոյն արտայայ- և տութիւնն է եղած և կը մնայ Հայ Եկեղեցին։

Երողութիւնը այսկերպ ըլլալէ վերջ, քրէական չարամտութիւն և մեր նորպատմութիւնն ու մեր ժողովուրդին մտաւոր ու հոգեկան պէտքերը արժեւորել աշխագիտնալ կը նկատենք այն խել մը ցափրառուքները, որոնք ատեն ատեն մեր ս մամուլին մէջ անդիտակից լրբութեամբ և իմաստագերծ իմաստակութեամբ կը ծամածութին, ըսելու համար թէ Հայ Եկեղեցին գաղրած է իր դերէն, թէ անիկա սրտառուչ անցեալ մըն է միայն, աւելին՝ թէ ան իրու զործիք կը ծառայէ ազգամիաս ուժերու, գաւաճանելով մեր ժողովուրդին։ Այս չարամիտ պարսաւը նոր չէ, յիսուն տարիներէ ի վեր նենդամիտ չարաշահութեամբ կը բարձրանայ այս ժանդուած ձայնը, միամիտ յանձնապաստանութեամբ մը կարծել տալու թէ տփ մը յարդի ծուխով կարելի է ամպոտել կապոյտ ընդարձակութիւնը երկնքին։

Չառագովական խօսքեր ըրած չենք ըլլար, եթէ ըսենք թէ Սփիւռքի Հայ ժողովուրդը՝ ամէն ատենէ աւելի, մանաւանդ այսօր պէտք ունի Հայ Ե- կեղեցւոյ, և անկէ ճարուելիք մեծագոյն բարիքներուն, որքան ատեն որ ուղէ հաւատարիմ մնալ իր աւանդութեան, իր մշակոյթին, զինք մշտնջենաւորող և զիմազծող ոզիին ու իր ազգային խտէալներուն։ Առոք ու նույիրական է այն ոզին որ իրու զերագոյն ազգակ պահեց ու կընայ պահել տակաւին մեր մըլինը՝ հաւատարիմ իր արեան, իր լեզուին և իր անցեալ սրբութիւններու ձայնին։

Տակաւին Եկեղեցին այն բեմն է ուրկէ արտասահմանի հայութիւնը կըր- նայ հաղորդուիլ իր ժողովուրդի իրական արամային։ Այս զերագոյն վայրը՝ ուր հայ մը ինքինքը ամենէն աւելի հարազատ կը զգայ իր եղբայր հայուն, այն հոգեկան և նիւթական կազմակերպութիւնը, որուն մէջ և որուն հովանիին ներքե հայ հոզին կընայ պաշտպանուիլ արտաքին ազգեցութիւններէ, և մնալ հաշտ ներքինքին և իր անցեալին։

Միսալ չըմբռնենք հարցը, Հայ Եկեղեցին սահմանուած է նախախնամա- կան դեր մը կատարելու ոչ միայն որովհետեւ ազգային հանգամանք և կարեւու- րութիւն ունի, ինչպէս կը հասկնան առնասարակ արդի բանզէտները, այլ որով- հետեւ Հայ Եկեղեցին իր դարաւոր կեանքին մէջ հոգեւոր հաստատութիւն մը ըլ- լալէ վերը՝ մեր մէջ շինած է նաև մեր ազգային նկարագիրը, մեր մշակոյթի ոճը և ձեւակերպած մեր քաղաքական ուղին, բան մը որ չկըցին ընել զինքը մինչև այսօր աքացել ուղող նորելուկ բոլոր գաղափարախօսներն ու քաղաքա- կան գեր մը ստանձնել փորձող ազգային փրկիչները։

Այսօրուան մեր կեանքը Սփիւռքին մէջ, տարբեր չէ անցեալէն, և շա- րունակութիւնն է անօր։ այսօր նորէն մեր Գաղթաշխարհը կ'ապրի իր մուայլ և դժողակ օրերը, առայժմ հեռու իր հայրենիքէն և անպետական վիճակով, ու միայն Հայ Եկեղեցւոյ զաղափարին մէջ և հովանիին ներքե կընայ նետել իր ապահովութեան և զոյութեան խարիսխը։

Լեզու, դպրոց, մամուլ և անոնց սպասը արհամարհելի միջոցներ չեն անշուշտ ազգապահանման, բայց անոնցմէ վեր կը մնայ Հայ Եկեղեցին։ Կ'ը- սենք ասիկա ոչ յանուն նախրնարութեան մը, այլ այն խորունկ հաւատքով թէ վերոյիշեալ ազգակները, աւելի կամ նուազ չափով, կը մնան ենթակայ աղա-

ւազման նոյնիսկ նուազման : Անոնցմէ միայն մեր Եկեղեցին է որ տակաւին են թակայ չէ եղած այլայլման և աղղեցութիւններու . իբրև փառաւոր աւանդարանը մեր կրօնա-ազգային խտէալին , ամենէն անխոցելի մասն է մեր ժողովուրդի հոգեկան ու բարոյական զօրյոթին , դարերու ճնշումով և արիւնով շինուած ադամանդը , որ դիւրին չի փշուիր : Իր պահպանողական ոգին և սրբազն աւանդութիւնը , շինուած դարձեալ իր պատմութեան մեծ ռազմավայրին մէջ , դիւրութեամբ ենթակայ չեն կրնար ըլլալ ժամանակի ազգեցութիւններու , մաքանան դաշտին մէջ կուանուած այս ինքնուրոյնութիւնը դիւրին չայլայլիր նոր զաղափարներու և ազգեցութիւններու փշումներէն :

Իսկ ցեղային խտրութիւններու այս կրկէսին մէջ ինքղինքնուս հետ կարենալ մնալու միակ մտածումն ու ապաւէնը Հայ Եկեղեցին է դարձեալ , որուն կրօնական հանգամանքը առաւելութիւն մըն է այս տեսակէտով : Վատահ ենք թէ այն սրտայոյզ հետաքրքրութիւնը , ոգեւորութիւնը , կենդանի յօյսը զոր զոյւթիւն ունի մեր ժողովուրդին մէջ , իր Եկեղեցւոյ նկատմամբ , զիտակից լարումով մը եթէ զործածուին ամբողջապէս ի նպաստ այդ հաստատութեան , պիտի կրնային կենագործել իր դարաւոր դերը արդիացած սպասով մը՝ որ մեր ժողովուրդին ու Եկեղեցականութեան պարտի ըլլալ միասնաբար :

Իսկ Սփիւռքի Հայութեան երկրորդ ազատարար զօտին և փրկարար ազգակ կը մնայ Հայրենիքը , թէ իբրև հող և թէ այդ սրբազն աւանդը ազգութիւնուրդ :

Հայրենիքը , հող և ժողովուրդ նշանակելէ աւելի , համապարփակ հասկացողութիւն մըն է անտարակոյս : Առանց հայրենիքի ժողովուրդ մը չի կրնար ազգ կոչուիլ : Իրօն , աւանդութիւն և լեզու բնորոշիչ յատկութիւններ են ազգութեան , սակայն անոնք ժամանակաւոր կեանք ունին առանց հայրենիքի նիւթական զոյութեան և կարեկիութեան : Այսկերպով , կը շեշտուի հողին նշանակութիւնը և արժէքը՝ ժողովուրդի մը զոյութեան , ինքնապահպանման և տեւականացման հարցին մէջ : Իրենց հայրենիքէն հեռացող ժողովուրդները հարկադրանքին տակն են յամբարար կորմնցնելու իրենց ցեղային (հողային) յատկանիշերը , ընդունելու համար նկարազը զիժերը այն երկրին , որու հողին վրայ ապրելու ճակատազերը կը վիճակի իրենց : Անոր համար է որ Ամերիկա զալթող Անգլիացիներն ու Գերմանները ժամանակ մը վերջ Եանի դարձան շնորհի Հնդկական հողի ոյժին , և անոնք այսօր շատ աւելի կը նմանին այն բնակչութեան զոր վճացուցին , քան իրենց նախկին վիճակին : Վասնզի հողին կամ շըշապատին ազգեցութիւնը աւելի մեծ է ժողովուրդներու վրայ , քան ժառանգութեան կամ ցեղային ուրիշ յատկանիշերը :

Այսօր մենք չունինք մեր հայրենիքը և մեր սաքերը օաար հողին վրայ կը կոխեն , վճարելով ծանրօրէն անոր չզոյութեան տուրքը : Սակայն առանց այդ հայրենիքի զաղափարին , անոր կապուած զգացումներուն և հողի ծայնին , Հայ Սփիւռքը սահմանուած է հիւծելու , անցնելէ վերջ այլասերման բոլոր դիմազեղծող ձեւերէն :

Մի՛ յամառիք ըսելու , աղէտալի ինքնախարէութեամբ , թէ հայը հակառակ իր նկատմամբ ի զործ դրուած հալածանքին և կոտորածներուն , դեռ կը շարունակէ տեւել և կրնայ ապրիլ : Մեր անթիւ կորուսաները , մեր օտարացած

լեզուները և մանաւանդ խորթացած հողիները հակառակը պիտի աղաղակեն : Վկայ այս բոլորին՝ հայրենիքի ծոցէն դուրս նետուած մեր զաղթականութիւնները : Տիրուր է մտածել որ վաղը զուցէ այսօրուան հայ զաղութներն ալ սահմանուած ըլլան անողոք որոշագրութեամբ մը նոյն ճակատագրին :

Մենք ամէն բանէ առաջ և ամէն բանէ վեր՝ կը հաւատանք Հայ Հովին, և դարաւոր փորձառութեամբ սովորած ենք թէ այդ հոգիին զերազոյն պաշտպանը դարձեալ Հայ Հայրենիքն է : Ահա թէ ինչու կը պահանջենք Հայրենիքի այդ իրականութիւնը՝ կենդանի և բարախուն, Սփիւռքի բոլոր խաւերու հողին ներս : Ոռանց այդ Հայրենիքի զգացումին ու զաղափարին զոյութիւն չի կրնար ունենալ Հայուն հայրենասիրութիւնը, սկիզբ մեր բոլոր ուրախութիւններուն և արտմութիւններուն, աղրիւր մեր յայսերուն ու երազին, ինչպէս երէկ այնպէս ալ այսօր ու վաղը :

Դաղափարի չարանիւթուած տարակարծութիւնները չեն կրնար տեղ զրաւել այս սրբազն և ամէն բանէ վեր իրողութեան մէջ : Հայրենիքի և ազդի սէրը ինքնեկ զղացում է, կապուած որքան հանրային նոյնքան նաև անհատական ինքնասիրութեան : Միայն արատաւոր հոգիներ և քրէական չարամտութեամբ և խելազարօրէն շարժող մարդիկ կրնան թափուր մնալ այդ սրբազն զգացումէն : Ինքնաճանաչ հասարակութիւններու համար վէճը և տարամէտ զգացողութիւնը հայրենասիրական սկզբունքի շուրջ չէ, այլ այն միջոցներու և զրծունէութեան՝ որոնց չնորհիւ կը պահուի սկզբունքը :

Մենք յաճախ, արեւելքցիի յատուկ զգացումներով և մտայնութեամբ զրծուած ենք մեր պատմութեան ընթացքին : Մեր սանձարձակ և ճոխ երեւակայութիւնը և անոր սնունդ հայթայթող գնուական բայց դիւրաբեկ զգացողութիւնը, մեզի առաջնորդած է ժամանակաւոր ու տարտամ հայեցողութիւններու և արարքներու : Շատ ուշ սթափած ենք մեր երազներէն, երբ չարեքը արգէն կատարած է իր գործը, և կարելին՝ անդառնալիօրէն վրիպած մեր հասողութենէն :

Հայրենիքի մագնիսը երբեք չէ դադրած, իբրև գերազոյն հրայրք, զմեղ իրին քաշելէ . այդ բնախօսական և ինքնեկ զգացումի թափին. հակառակ կենալը և կամ զայն տկարացնելու միամտութիւնը դաւաճանութիւն է, և արտասահմանը չի կրնար ինքինքին թոյլ տալ այդ արարքը զործելու, որովհետեւ Հայրենիքի զգացումը հայ ժողովուրդի բոլոր զաւակներուն հոգիին մէջ հղօր է ու վառ, կրօնքի մը չափ և անհրաժեշտ՝ մեր հանապազօրեայ հացին և օդին համահաւասար :



ԿՐՈՆԱԿԱՆ

ՅԻՍՈՒՍԻ ՄԱՐԴՈՒԹԻՒՆԸ

«Եօւակիեցէք զիս եւ տեսէք, զի ոզի մարդին եւ ունիերո ոչ ունի, ուզկո զիսս տեսանէք զի ունիմ»:

(ՀՕԽԿ. ԻՇ. 39)

Նոյնիսկ Յիսուսի Յարութեան հրաշալի տեսարանէն վերջ, տակաւին առաքեալիներու եւ հաւատացեալներու խումբին մէջ կային անհատներ՝ որոնք երկմտանքի մէջ էին ամենուրեք պատմուող այն հրաշալի երեսովին նկատմամբ, որ իր մէկէ աւելի վկաները ունեն այլես: Մարդկային պատմութեան մէջ նորօրինակ այս անակնկալը դիւրին չէր ըմբռնել ու մարսել, նոյնիսկ տնոնց կողմէն՝ որոնց պակսած չէր երթեք հաւատքը բարձրագոյն կեանքի մը և գերագոյն աշխարհին նկատմամբ:

Տակաւին քանի մը օրեր առաջ, անոնք բոլորը, կսկիծը սրտերնուն, արցունքոտ աչքերով և հեղեկանքը խեղդած իրենց կուկորդներուն մէջ, տեսեր էին իրենց սիրելի Վարդապետը, խաչը ուօին՝ Գողգոթայի ճամբուն վրայ, անիբաւ խոշտանգումներու առարկայ: Խորունկ բեկումով նայեր էին աննման Վարդապետի տրոտում աչքերուն, քաղցրագին իրենց ուղղուած: Հեռուէն հանդիսատես էին եղած Անոր խաչի մահուան և թալման՝ և հովիւը զարնուած ոչխարներու նման ցրուեր էին ու պահուըտեր, չլսելու համար շնական քրքիչը թթշնամիներուն, որոնք աղատուած այլես նազովեցի մարգարէին ստեղծած մղձաւանջէն, կը կարծէին տարած ըլլաւ յաղթանակը:

Ու այժմ, Վերնատան ապահովութեանը մէջ, կը լսէին իր ձայնը, կը տեսնէին իր գերազանցօրէն քաղցրացած կերպարանքը, այնքան սրտազին ու իրական, որ անուշ տրոտութեամբ բայց եղբայրորէն կը մեղադրէր զիրենք իրենց կարկամ ու վեհերոտ հաւատքին համար, թելազրելով որ գործածեն իրենց մարդկային զգայարանքները՝ հաստատելու համար իր մարդութիւնը, այնքան նման իրենցինին: Բնաւանի վերոյիշեալ բառերով Յիսուս կոչ

կ'ընէ իր աշակերտներուն որ մօտենան, չափեն զինքը՝ հաստատելու իր իրական մարդութիւնը, միսէ ու ոսկորէ բաղկացած և անոնցմով պայմանաւոր կարողութիւն ներովը օծուն:

Քրիստոնէական տեսակէտով, այս հաստատուած իրողութիւնը մեր մարդացեալ Փրէկին պարագային, մարդուն կ'ընծայէ այնպիսի արժէք մը և աեղ մը Աստուծոյ նախախնամութեան մէջ, որ աւելի քան սրտապնդիչ և ուրախառիթի է, լիցուն բարձր և ազնիւ զգացումներով: Աստուծոյ մարդուն հետ ունեցած այս հասարակաց նմանութենէն կը բնորոշուի թէ մենք Աստուծոյ ցեղէն հնք, այս աշխարհը եկած, առանց գաղրելու սակայն զինքը երազելէն: Թէ մեր Տիրոջ բարձր ու վսեմ հոգեկան յատկութիւնները, որոնք չորս աւետարաններուն մէջ այնքան հանգամանօրէն և հրաշլի կերպով արտայատուած և վերբեռուած են, միայն իրենը չեն, այլ նաև կը պատկանին մեղդի: Այդ է զարձեալ պատճառը, անտարակոյս, որ մարդը, հակառակ իր շեղումներուն և մեղքին, Աստուծոյ մտածումով միայն կրնայ երջանիկ ըլլաւ և այդ մտածումին շնորհիւ իր մէջ բարիին ու չարին պայքարը կը վերջանայ առաջինին յաղթանակովը միշտ:

Իր փրկութեան հաւատատիքովը պայծառացած հոգին այն ատեն կը լիցուի իրական բերկանքով մը, որ ներքին առողջ և աստուածային զգացումին պարզեած գոհունակութիւնն է, նման աղաքինումի ըսկլսած հիւանդին: Իր Աստուծոյն մօտեցած ըլլաւու այդ զգացումը, հրճուանք և խրախոյս միայն կ'աղդէ իրեն, որովհետեւ իր խզճին ու գիտակցութեան իսկ վկայութեամբը կրնայ համոզուիլ որ ինքը անպէտ խլեակ մը չէ, թանձր և անբան իրերու կարգին, այլ ունի մեծ, հզօր և ամէն արժանիքներով լիցուն բնութիւն մը և նկարագիր մը, նման Անոր՝ որ իր մեղի հետ ունեցած հասարակաց ու նման մարմինը կ'առաջարիէ մեր նկատառման ու չօշափման, հաստատելու ինքինք մեր մէջ և զմեղ իր մէջ:

Մարդեղութիւնը, այն ատեն, սկիզբը մեր Տիրոջ երկրաւոր կեանքին, լրումն ու բարգաւաճումն է մարդկային նկարազին, աստուածայինովը լուսազարդ: Աստուա-

ծային այդ օժանդակութեանը շնորհիւ կատարելագործուած է մեր մարդկայինը, և մենք եղած ենք կատարեալ մարդը, նման իրեն, և այս այն օրէն ի վեր, երբ ինքը բնակեցաւ մեր մէջ, բաժնելով մեր ճակատագիրն ու եղբայրութիւնը:

Ինչպէս որ արեւո՞ն լոյսը երբ կը չուզայ գոհարեղէնի մը վրայ, երեան կը հանէանոր ներքին գեղեցկութիւնը, արոփուն ու չքեղ մաքրութեամբ մը, բանալով անձանթ խորքերը զայներուն և յատկութիւններուն՝ որոնք նախապէս չէին նըշմարուեր, կամ նման մարզու մը՝ որ շնորհիւ դաստիարակութեան և ճշմարիտ հասկացողութիւններու, կը լոյնայ ու կը պայծառանայ իր մարդկային բնութիւնը, կը կատարելագործուին իր բոլոր կարողութիւնները, որոնք անկէ առաջ չէին տեսներ, այնպէս ալ Տիրոջ աստուածայինը լեցուցած ու կատարելութեան աստիճաններուն բարձրացուցած է մեր մարդկայինը, նման անոր զսր ինքը ունեցաւ ու կատարեկորդեց: Գոհարը, այդ կերպով, պատկանեցաւ լոյսին, ու մարզը՝ գիտութեան, և այս օրինակով մարդկային բնութիւնը կը պատկանի աստուածայինին: Մարդեղութիւնը, ուրիմի, անբնական ու քմահաճ իրողութիւն մը չէ, այլ մեծազոյն և ճշմարիտ իրողութիւնը՝ թէ մարդը յաւետենական որդին է Աստուծոյ:

Միւս կողմէն Յիսուսի այս վաւերական մարդութիւնը, Յարութեան հրաշալի իրականութենէն վերջ, երկու զիրար ամբողջացնող իրողութիւններու կը տանի մեր միտքն ու հաւատքը: Անիկա, իրական մարդէ, ունենալով մեր մարդկային բոլոր յատկութիւնները, և յայնեւալ մարզն է իրը օրինակ և սկզբունք մեր ապագայի կատարելութեան:

Աշակերտները այս նոր իրականութեան առջև կրնան թերամատիլ, մտածելով Անոր անցեալ մարդուն, որ իրենց հետ եղաւ տարիներով, և որու մասին չէին կրնար բնաւ կասկածիլ, սակայն Վերնատան մէջ իրենց տեսած ու չօշագիր այս նոր իրականութիւնը, կատարելագործուած չափն էր Յիսուսի մարդութեան: Զէր փոխուած կամ այլալած իր մէջ մարդկայինը, այլ կատարելագործուած:

Մանուկը, որ տարիներու ընթացքին

շնորհիւ իր դաստիարակութեան և փորձառութիւններու կը կատարելագործէ իր մարդկայինը, վափոխութեան չենթարկէր զայն: Մենք մարդկօրէն կրնանք մտածել մեր անցեալ քաղցրութիւններուն, մեր երիտասարդ օրերու աղուորութեան և կարծել թէ այդ չքշանը իրական ու լաւագոյն չքշանն է մեր կեանքին, սակայն մենք մեր անցեալով չէ որ կատարեալ ենք այլ մեր ապագայովը:

Եղեմական պարտէզին յուշը՝ մեր անցեալի երջանիկ օրերու պատկերով լուսաշող, կրնայ զիմեկ զգուել, սակայն վրախափ մարզը նուազ կատարեալ է քան մեր ապագայ մարզը, որուն ամբողջական օրինակը մեզի կուտայ մեր Տէրը: Հինին այս նորոգութեան և կատարելութեան մէջն է մարզուն յառաջդիմութեան փաստը: Հետեւաբար չօշագիելով ընդունիլ Վերնատանը մէջ իր իրական մարդկայինը, հաստատել է իր մարդութիւնը, ապացոյց և օրինակ մեր ապագայ մարդկային կատարելութեան:

Երեք կարեոր իրողութիւններ և յատկութիւններ կան Յիսուսի կեանքին մէջ, որոնցմով կը յատկանչուի մեր Տիրոջ մարզեղութիւնը: Առաջին իր անկախութիւնն է, երկրորդ իր բաջուրինը և երրորդ իր վեհանձնուրինը: Երջապատուած թէն աշակերտներու և հետեւողներու խումբէ մը, որոնք ուսկայն հազիւ կը հասկնան զինքը, իսկ մասցեալ ժողովուրդը թշնամական վերաբերմունք ունի իր նկատմամբ. և որքան ինքը կը խորանայ իր առաքելութեանը մէջ, այնքան կը պակսին բարեկամները և կը շատնան թշնամիները: Սակայն այս բուլորը չեն կրնար յուսահատեցնել և չեղեցնել զինքը մազաչափի: Ամէն ոք Կ'ընդունի թէ ինք կը խօսի և կը գործէ հեղինակօրէն, անկախ պարագաներու ձախորդ դասաւուրումէն և չուրջիններու ընդդիմութեան:

Յիսուսի այս ընթացքին բացատրութիւնը կուգայ իր բացարիկ անձնաւորութեան խորքէն: Անիկա նուիրուած մըն է իր գատին և ամէն բանէ վեր կը նկատէ զայն, չի հանգուրժեր ոչ զովեստի և ոչ պարսաւեի և կամ նման նկամուտ արտայալութիւններու, և բոլոր այն գաղափարներուն, որոնք գործնական նպաստ մը չեն բերեր իր դատին և ոյժ չին տար իր արտայալութիւններուն: Ինչ-

պէս գետը աջէն և ձախէն իր մէջ ընդունող գետակներէն աւելի կը մեծնայ, այնպէս ալ մեր Տիրոջ իր դատին նույիրումը և զայն միւս բոլոր գաղափարներէն վեր բռնելու անկախ ողին կը կազմէ կեզրոնաւկան և վարչէ գիծը իր կեանքին, և միւս բոլոր մտածումները հարկատուներ են այսէտական գաղափարին։ Անիկա իրու գաղափարականի մը ներկայացուցիչը ինքինքը նոյնացուց իր դատին հետ, և աշխարհի մէջ ոչինչ կրնայ զինքը գոհացնել, եթէ ոչ հոգիի մը ամբողջական նույիրումը աստուածային այս ծրագրին, որուն ծառայել փառքը ըրաւ իր կեանքին։ Շատ քիչեր ժամանակակիցներէն, իր մահէն վերջ մանաւանդ, գիտցան արժեկորել այս բարձրօրէն մարդկային կարողութիւնը։

Նոյն կարելի է ըսել իր քաջութեանը համար։ Կատղած բազմութիւններու առջեն մն կը կենայ խաղաղ և անթեքելի սիւնի մը պէս։ Ոչ մէկ վէտ կը շարժի իր դէմքին վրայ և ոչ մէկ թել իր հոգիին մէջ, երբ նաւակը նստած կը զիմաւորէ փոթորիկը։ Պասեքի տօնին առիթով անվախ կը զիմէ գէպի Երուսաղէմը, երբ գիտէ թէ հօն իրեն մահ կը սպառնայ։ Գեթսեմանիէն սկսեալ գատարանէ գատարան ու մինչեւ բարձունքը չարչարանքներով լի տառապանքին, մն խաղաղ է ու աներկիւղ։

Յիսուսի բարոյական քաջութիւնը սերափի կապուած է իր այն մեծ վստահութեան թէ վերջնական յաղթանակը բարիին է։ Եթէ մն իր հոգին վեր բռնած չըլլար մարդոց երկրուղէն, պիտի չկրնար իրացնել իր գերը։ Խորհելով Քրիստոսի կեանքին զիւցազնութեանը վրայ, չենք զարմանար Անոր զայրկեան մը իսկ տկարացում չունեցող գործունէութիւնէն, երբ մանաւանդ Գործք Առաքելոցի մէջ կը կարդանք, «Տեսնելով Պետրոսի և Յովհաննէսի վստահութիւնը... զարմանքի մէջ էին և կը հասկնային թէ անոնք Յիսուսի հետ գտնուած են»։

Յիսուսի վեհանձնութիւնը, իր քաջութեան մէկ ուրիշ երեսը, անգերազանցելի է։ Իր թոյլատու և ներող կեցուածքը, նոյնիսկ իր թշնամիներուն նկատմամբ, միայն հիացում կրնայ պարտազրել։ Քրիստոսէ առաջ թշնամիին ներելը հազուադէպ բան էր, նոյնիսկ պարսաւելի, այժմ սահայն, Յիսուսէն յետոյ, կարելի չէ երեւա-

կայել բարձր նկարագիր մը՝ պուանց այդ յատկութեան։

Անիկա կը պատուիրէր իր աշակերտներուն՝ ընել այն՝ ինչ որ ինք կ'ընէր. — Սիրել իր թշնամիները, բարիք ընել անոնց որոնք կ'ատէին զինքը, որնել զանոնք որ կ'անիծէին, և աղօթել անոնց համար որ զինք կը հալածէին։ Նոյնիսկ զինք մատնող անարժան աշակերտին նկատմամբ, եղաւ ներոյամիտ ու ցաւոտ. «Բարեկամ, ինչո՞ւ համար եկար հոս» ըստ Յուդային երբ մատնիչը համբոյրը տալու կը մօտենար։ Նոյնը պիտի ընէր խաչի չարաչարանքներուն մէջ, աղաղակելով սրտազին, «Հայր ներէ ասոնց, որովհետև չին գիտեր թէ ինչ կ'ընեն»։ Այսկերպ Յիսուս մեզի կը ներկայանայ հոգի մը, լեցուն ուրախութեամբ և ճառագյուղ, որ տրատմ ու ճակատագրական պարագաներէ չընկունիր, զեղուն վեհանձնութիւն մը՝ որ չի դառնանար ու եէ անիրաւութենէ, չի պզտիկնար ու է հակարութենէ, լեցուն ու զեղուն եղած ըլլալուն համար ամենաբարձր մարդկութիւնով մը։

Անոնք որ թերամտօրէն կը մօտենան Անոր, կը կասկածին էն առաջ Անոր մարդկութեան, որ ոչ միայն նման է մերինին, այլ նաև ունի բարձրագոյն կատարելութիւնը մեր ապագայ մարդուն։ Յարգալից մատներով մօտենանք իրեն և շօշափենք զինքը ու կասկած չունենանք իր ճշմարիտ մարդութեանը վրայ, առանց որուն ամբողջ չի կրնար ըլլալ մեր հաւատքը իր աստուածային գիտազիրներուն և անձին նկատմամբ։

Ե.



Վ. Ա. Ր Դ Ա Ն Ի Ս Ի Բ Տ Ը Ը Ը

2

Անցան օրեւ ու տարիներ,
Հանուկն վարդան,
Երազ մինչապէս բռուրազեղ,
Նողիկն յետին պարքեւազուն,
Խնկած բոցեղ մորենիփին
Մամիկոնեան,
Պիտի հաղէր, նիարդ նիարդ,
Խմասն ամբողջ մեր աշխարհին,
Լեցուն յոյզով ու դառնութեամք,
Ցաւակն որոնց՝
Նետն էր անմեռ ու աննուան
Մեր երազին,
Որ դարէ դար
Քարախեր է սիրս մը ինչապէս
Հնդերին մէջն մեր հողերուն,
Երակներէն մեռելներուն
Եւ ողերուն,
— Պատամունքը Հայրենիքին — :

Այն օրերուն նորէն կ'իջնէր
Այս անանուն երկինքներուն,
Չարդարելու միտքը հայուն
Իրին փառնով:
Մը աննման գեղեցկութիւնն,
Հանճարն հայուն,
Մէծ ու ազնիւ հոգիներու
Հոսող արին,
Եղերական ըողն անորակ,
Վետի բաժակ,
Հաւորչոր անհուն բնաւ,
Հովերուն դէմ միւս հարհատող,
Որ մահուան մէջն խսկ անվրդով
Գիտէ բանալ,
Միրամիներն իր հոգիին,
Յաւերձաքեւ :

Տօն էր լոյսի,
Հանճարն հայուն,
Մորին մէջէն մեր դարերուն,

Կը հազնէր բոց, կ'առնէր մարմին,
Խորն հոգիին
Սուրբ Մեւրոպին,
Որ իր վետի
Մորենիին մէջէն այրող
Նոր տեսանող
Խոժոռ, հոկայ ու միայնակ
Շունիկի ինկած
Մեծ Բարութեան ոսկերուն տակ
Ուրցունքներով
Պիտի խնդրէր
Խմասութեան ծովին անհուն
Գիրերն Հայուն :

Կատարուած էր նրանքն անհառ
Ու անանուն,
Նետն հրայրին,
Մոնազին սուրբ,
Հպած երկնի կապոյս սրտին,
Խաւարամած մեր բիբերուն,
Պիտի բանար
Ո.նդասան նոր,
Որու եղրին
Կեցած ուսուղն ասուածարեալ,
Պիտի որսար
Քասոներէն հակատագրին,
Տառերն աղուոր
Հայ բարբառին,
Մարգարիտներն խմասութեան
Ճերմակ ծովին :

Մինչ դպիրներ, բարգմանիչներ,
Հաւատեռանդ կը գրումին
Մազաղարին երկնայարդար,
Լոյս ու ոսկի
Ասդերն ինչպէս խաւարին ծոց :

Այն օրերուն՝
Մատեանը սուրբ,

Ցեղին լեզուն , ցեղին հոգին
Գանձարանուած խորն իր ալին ,
Կուզար սփռել
Խաւարին դէմ հակատագրին՝
Մրեները անման լոյսին ,
Մտին , ողին ու հաւատին :

Եւ անցեալէն այրիացած
Բազմութիւններ ծարաւահիւծ ,
Դարերու հոծ ուռին մէջէն
Պիս' առնէին իր ակունքէն
Զուր կենդանի ,
Եւ արևէն՝ փառէն իր ոսկի ,
Որ դարէ դար
Յաւերժարար ,
Պիս' բասեղծէր երզը հզօր ,
Ամէն օր նոր , ամէն օր մեծ
Մեր պատմութեան ու հաւատին :

Ու զիրը սուրբ ուռչ աստուածեան ,
Ժամանակի եղծումէն զերծ ,
Կը բայխորէր յաւերժարար ,
Մերունդներու ,
Մեր հոգիին ու մեր հողին
Դաշնակութեան իրեւ աղքիւր :

Ու զիրը սուրբ ,
Նոր մանանայ ,
Ս.նապատին մեր պատմութեան ,
Դիտութեան ցուպ ,
Հպարտութիւնն սերունդներու ,
Ս.ւազներու նամքան նըսող
Լոյս անմոլար ,
Սառած , շիշած հոգիներուն
Մասր կախարդ .
Մուրէն՝ լոյսին առաջնորդող :

Ս.նցան օրեւ ու սարիներ ,
Մրիւններու , արցուններու
Ծիածանով :
Մանուկն աղուոր ,
Ծաղիկն ինչպէս արեւին դէմ

Կը բըռնէ քազ ,
Պատանութեան ոսկի դռնէն
կ'առնէւր իր տայլ :

Ո՞վ սրբազն գեղեցկութիւնն
Պարմաններուն Մամիկոննեան ,
Ռոռնի կարին նես մայրենի
Գիշցան ըմպել կարը կարմիր
Հայրենիին ,
Զգալ տռփին , խորունի , իրաւ ,
Մեր սուրբ հողին ,
Դողն անանուն մեր Ասծոյն ,
Շեղութիւնն անպարազիծ
Մեր երկնելին ու արեւուն :

Օրերն իրեն՝
Յօղ ու համբոյր ,
Լարին վրայ մեր լեռներուն ,
Հայելիին դէմ ջուրերուն ,
Եւ նառազայր ու բարմութիւն՝
Զմրուխտին դէմ մեր դաշերուն :

Օրերն իրեն՝
Բացուած ականչ ու բացուած սիրս ,
Ս.նենուն երգին մեր աշխարհին ,
Ոլորակուած սեղներէն
Մեր հովերուն ,
Կար կար իմկող
Շրբուններէն համակ կրակ ,
Հողագործին ու մշակին ,
Կոհակներուն մէջէն անտես
Պօղանչներուն եկեղեցւոյ ,
— Ոսկի աղբիւն հոգիներուն :

Օրերն իրեն՝ ողկոյզ կախարդ ,
Հնձանին մէջն հայրենիիին ,
Լոյսով սարուած
Յօղով նիւսուած
Ու բաղցրութեամբ մքնոլորտուած ,
Ամբողջ արիւն , ամբողջ խոռով ,
Նաւակ մինչպէս բացառազան
Կապոյտին ծոց :

ՏԵՍԻԼՔ - ՆԵՐԿԱՆ

Ժառանգաւորին

Պարման տղայ, դուն ինչո՞ւ ճամբուս վրայ յամեցար,
Եւ ուզեցիր որ եղբօր պէս խօսէի նեղ երկար՝
Տարքեր - տարքեր շեշերէն կեանինի հազար ձայներուն
Որոնի նեղ միշտ կը կանչեն... դուն՝ բացուող - վարդ, ե-
րերո՞ւն:

Ու վարանոս ու կըթոս՝ տեսիլք - ներկան կերտելէն
Կը ըղբայուխս անցեալիդ անփառունակ յուշերէն.
Լոյսի խաղե՛ր՝ հեռուէն, նեղ կը բաւէն ուժգնուէն,
Խեխանազուն մը իբրև գերուած փշանիք - հանոյին...:

Զիս վարանինի կը մատնես՝ զաղջ հովերու յանձնիրւած,
Ու կիրերէ տարուքեր: Միտքը խըռով՝ զի՞ր մը բաց,
Դուն՝ ոլարմանի ու լրտոն, ահա կեցե՛ր իմ զիմաց...:

Կը հեռանամ երբ նեզմէ, իմ աչերուն մէջ սառած
Հարցումն է չե՛չ՝ ինձմէ նեղ. — «Կեանինին մէջէն կըր-
նա՞ս դուն
Բալել այգակս միայնակ, միշտ հոգիով ալ զեղուն...»:

— Գարձի՛ր տեսիլք այն կեանինին, ուր օհնուին պիտի
դուն...:

ՇԵՆ - ՄՈՀ



ՈՎ ՄԵՌԵԼՆԵՐՈՒ

ՈՎ մեռելներս անքին, գույք նորէն ըուցըս ահա՛,
Զի չանցնիր որ մը երեխ որ նայուածիս դէմ չի զայ
Չեր կերպարանքը բարի, աղօթամած աշխերով,
Ու ձեր թեւերը տամուկ զիս չի գրկեն անխըռով:

Դուք ալեհեր ու զառամ եւ կամ ժպտուն պարմանի,
Գերեզմանուած կամ անյայս՝ առանց խնիոն փրխի,
Կարօս խնձի՞ թէ կեանին՝ կուզաք նոգույս իմ վերեւ
Չեր անսահման ըստուերով, արինոն կամ ձիւնահեւ:

Կը զգամ թէ միշտ աւելի կը մօսենամ ձեր համբուն,
Սեւեռաբիբ ցընորքին՝ ուղեւորի մը հանգոյն,
Եւր իրական եղաւ սոսկ վիշտը, մատներն իր բիւրեղ

Ճմշեցին սիրուս անվերջ, ո՞վ մեռելներս բարի,
Ա՛լ զըրայիբ ձեր եղոր մահացութեան ծարաւի,
Եւ փակէիմ իր աշխերը համբոյրով մը լուսեղ...

Ա.ՐՍԵՆ ԵՐԿՈՅԹ

PARADOX

Թէ այս է կեանիք, անիմաս է ան,
Եւ նիզը մարդուն կ'անցնի ընկունայն.
Կ'ըսեն բայց նոզին անմահ է յաւէս,
Կ'ըսեն նոզին ալ կը ջնջուի անհես,
Ըմբռնելի չեն երկունն ալ մըսին,
Հետ աղամորդին երկրին, երկինքին
Միշեւ անդադար այսպէս տարութեր,
Լոյսին չընասնող, սակայն նոդին վեր:

Փետրուար 1952

Մ. ՄԱՆՈՒԿԵՍՆ

ՔԱՌԵԱԿՆԵՐ

Հետ բախսակից բալէ անվախ այս համբան,
Սիրով կրէ ծանրը խաչըդ բու ուսին,
Հաւատա՛ թէ կայ նպատակ մ'անպայման,
Թէ խաւարէն կը բարձրանաս դուն լոյսին:

Փետրուար 1952

Մ. ՄԱՆՈՒԿԵՍՆ

(Ն. Ա. Մ. Ա. Կ.)

Արդեօֆ նիմա ի՞նչ կ'ընես, իմ աղուոր զուարքուն,
Կը կարդա՞ս թէ կըզքոսնիս, բո՞ւն ևս թէ արքոն,
Կը զգա՞ս միթէ կարօսը ինչպէս է յորդեր,
Հսպասցընե՞ս պիտի դեռ, վերադարձի՛ր սուն:

Փետրվար 1952

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԵՍ ՀԱՐՑՈՒՑԻ ՄԱՂԻԿԻՆ

Ես հարցուցի ծաղիկին
Թ'ինչպէս կ'նայի ան կեանին.
Հծեց «կեանին է խաղցագին»:
«Վ'ըմպէմ ես ուղին արեւոն,
«Կը զինովիսոմ ես նովոն
«Դրկանմերէն խըռովուն:
«Սիւժին երզով կ'օրօնին
«Բիլ երազը մեղմօնէն,
«Եւ աստվեռու լային տակ,
«Ես մարգրիսներ կը շարեմ
«Եւ կուրծքս կը զարդարեմ,
«Արփոյն ցոլթերն անոնց նիս
«Եօրը զոյնով կը պարեն:
«Երբեմն թիթեռ մը կուգայ,
«Թրոչող բանու մը աղուոր,
«Ինչպէս երազ նեռաւոր,
«Իմ ըրբերէս կ'արքենայ
«Եւ ծոցիս մէջ կրթնանաս:

«Եւ երազիմ՝ պէս
«Վ'անցնի կեանին այսպէս»:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ



ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ

ԱՍԱՐԴՈՒՆԻ ՀԱՏՈՒԱԾԱԿՈՂՄԸ

ՅԱ. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն.

Կը հրատարակենք, թարգմանաբար՝ բեւեռազիր արձանագրութիւններէ, Սենեքերիմի սոդի, Ասորդանի 681-669 և. թ., վեց-կողմեան հատուածակումը, Լախիրայի կառավարիչ, Աթար-Ելիի անուանազրութեան խմբազրուած, որ, յանուն Բրիտանական թանգարանի, 1927-28 տարիներուն, Եինուէի մէջ, C. R. Thompsonի և R. W. Hutchinsonի կողմէ տարուած պեղումներու ընթացքին գտնուած է, Գույաւունուզի մօտակայ վայրէ մը: Ապա նմանազրութեամբ, արտագրութեամբ և թարգմանութեամբ հրատարակուած C. R. Thompsonի կողմէ "The Prism of Esarhaddon and of Ashurbanipal," London, 1931, խորագրով:

Ասորդանի զահակալութեան պարագաները, մեքենայութիւնները իր եղբայրներուն, իր յաջորդական յաջթանակները, կը պատմուին, հոն, մանրամասնօրէն, ուր սակայն, ոչ մէկ յետին ակնարկութիւն, յիշատակութիւն, իր հօր սպանութեան գեպքը լուսաբանող, այնքան ծանօթ, ամբողջ Մերձաւոր - Արեւելքի մէջ, որուն համաձայն, իր մէկ կամ աւելի որդիններուն կողմէ սպաննուած էր Սենեքերիմը:

Ինչո՞ւ այս լուսութիւնը, դիտումնաւոր անդիտակցութիւնը . . .

Արդարք, գրուած քին շահեկանութիւնը կ'արժենորուի ասուրա - բաբելական պատմութեան այդ խառնաշփոթ ըրջանին, իր բերած մասնակի նպաստով, և Սուրբ Գրական քաղաքներու իր յիշատակութեամբ առաւելաբար: Աւզդակի բեւեռազիր բնագրէն կատարուած է մեր թարգմանութիւնը, C. R. Thompsonի վերոյիշեալ հատորէն, և նօթերը աւելցուած մեր կողմէ:

Յ. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն. Տ. Ա. Կ.

ՍԻՒՆԱԿ ԱՌԱՋԻՆ

1. Ասորդանի⁽¹⁾ ապարանքը, մեծ թագուրը, հզօր թագաւորը, 2. թագաւորը

տիեզերքի, Ասորեստանի թագաւորը, վեհապետը Բաբելոնի, 3. Առմերի⁽²⁾ և Աքարտի⁽³⁾ թագաւորը, չորս ծագերու թագաւորը, 4. Օրինաւոր կառավարիչը, սիրականը⁽⁴⁾ մեծ աստուածներու, 5. որուն անունը իր մանկութենէն ի վեր, Աշուր⁽⁵⁾, Շամազ⁽⁶⁾, Պէլ⁽⁷⁾ և Նապու⁽⁸⁾, 6. Իշթարը⁽⁹⁾ Եինուէի, Իշթարը Սրպէլայի, 7. Հըռչակամած էին Ասորեստանի թագաւորութեան համար, 8. աւագ եղբայրներէս, իրենց կրտսեր եղբայրն էի ես: 9. (Բայց) հըրամանովը Աշուրի, Սինի⁽¹⁰⁾, Շամաչի, Պէլի և Նապուի, 10. Իշթարին Եինուէի, (հ) Իշթարին Սրպէլայի, հայր(ս) որ զիս յառաջ բերաւ, 11. Ներկայութեանը⁽¹¹⁾ եղբայրներուս, փառաւորեց⁽¹²⁾ զիս օրինաւորապէս, և 12. սապէս (խօսեցաւ): «Այս է արգեօք զաւակը յաջորդութեանս», 13. (յետոյ) հարցուց Շամաչին և Ատատին⁽¹³⁾ պատգամով, և հաստատական չեշտով մը, 14. պատասխանեցին իրեն սապէս. «Ան է քու փոխանորդգոյ⁽¹⁴⁾: 15. անոնց հանգիստաւոր խօսքը, յարգեց ան (Սենեքերիմ), և Ասորեստանի ժողովուրզը, պղտիկ և մեծ, 16. եղբայրներս, (և բոլոր) արու շառաւելիները հօրս (ընտանիքին) միասին հաւաքեց: 17. Աշուրի, Սինի, Շամաչի, Նապուի, Մարտութի⁽¹⁵⁾, Ասորեստանի աստուածներու (պատկերներուն) առջև, 18. (և) երկնքի և երկրի (բոլոր միւս) բնակիչ աստուածներու, յաջորդութեանս (օրէնքները) ապահովելու համար, 19. իրենց կրկնել տուաւ, իրենց հանգիստաւոր խօսքը, 20. պատեհ ամիս մը, նպաստաւոր օր մը, համաձայն իրենց փառաւոր հրամանին, 21. թագաժառանգին պալատը, երկիւղալի վայրը, ուր կ'ապրին (անոնք, որոնք), 22. սահմանուած (հն) թագաւորութեան համար, բերկրանքով մտաց: 23. (Ան) վայել կիցուածք մը, համակուեցաւ եղբայրներուս վրայ, և 24. (օւղի) աստուածներուն լըգեցին, իրենց բուռն արարքներուն 25. ապաւինեցան, մեքենայելով չարիք, 26. չար լեզու, սուտ բամբասանք, (ինչ որ է) աստուածներու կամքին հակառակ, 27. զրգուցին իմ զէմ, և անզայել նենգութեամբ, 28. ետեէս ըմբռստութիւն նիւթեցին. 29. համոզեցին սիրտը հօրս, (և) աստուածներու (կամքին) հակառակ, լարեցին իմ զէմ: 30. Գաղտնօրէն չարժեցաւ

իր սիրով զութով, 31. իր աչքերը սեղուած էին թագաւորութեանս կիրարկման համար, 32. խերհրդակցեցայ սրտիս հետ, և քննեցի հոգուոյ մէջ, 33. ըսելով՝ սԲուռն ին իրենց արարքները, և (լոկ) իրենց սըրամութեան, 34. կ'ապաւինին, չարիք կը գործեն, 35. Աշուր (⁽¹⁶⁾), թագաւորը ասուածներս, և զթառատ Մարտուզը, որնց խորշանք մըն է անիրաւութիւնը, 36. պաղատանքներով, կոծերով, և երկրագութիւններով, 37. աղաչեցի իրենցմէ, և ընդունեցին աղօթքներս: 38. Համբային տէրերուս, մեծ աստուածներու կամքին, չար արարքներու ի դիմաց, 39. գաղտնի վայր մը բնակել առևն զիս, իրենց քաղցր հովաննին, 40. տարածեցին իմ վրայ, պահպանեցին զիս թագաւորութեան համար:

ԵՐԿՐՈՐԴ ՏԱԽՏԱԿԱՆ

41. Այնուհետև, եղբայրներս կատղեցին, և ինչ որ աստուածներու, 42. եւ մարդոց մօտ անհաճոյ էր, ուործազրկեցին, և չարիք մեքենայեցին: 43. Ընդգրեցան, Նինուէի մէջ անսասուածօրէն, զէնքեր(ով), 44. իրար զարնուեցան մատազ եզնիկներու նման, թագաւորութիւն գօրծազրելու համար, 45. Աշուր, Աին, Շամաշ, Պէտ, Նապու, Եշթարը Նինուէի, Եշթարը Արաբէլայի, 46. Թշուառականներու արարքները որնք գործուած էին, աստուածներու անհաճոյ ձևով մը, 47. Նոզկանքով զիտեցին, և չօգնեցին իրենց: 48. (Այլ) իրենց ուժը տկարութեան վերածեցին, 49. և խոնարհեցացին զիրենք իմ (առքերուս) տակը. 50. Ասորեստանի ժողովուրպը, որնք ուխտերը, զորս մեծ աստուածներու երգաւճով, 51. ջուրով և իւզով երգուընցած էին պահպանելու իմ թագաւորութիւնը, 52. իրենց օգնութեան չի դացին. 53. և, Ասորզան, որ մեծ աստուածներու, իր աէրերուն օգնութեամբ, 54. չէր հա քաշած իր կուրծքը (⁽¹⁷⁾) պատերազմի մէջ, 55. չուտով տէլեկացայ իրենց վատ արարքներուն մասին, և, 56. ո՛՛հա բացականչեցի. պատեցի Եշխանական զգիստու, և, 57. ողբացի, առիւծի պէս կատղեցայ, և յուղուեցաւ հոգիս. 58. շարունակելու համար հօրս տան թագաւորութիւնը, ծափահարեցի (⁽¹⁸⁾) (պեկոչելով աստուածները): 59. Ա-

չուրին, Սինին, Շամաշին, Պէլին, Նապուին, Ներկալին, Նինուէի Եշթարին, Արաբէլայի Եշթարին, 60. բարձրացուցի ձևոքրերս և ընդունեցին աղօթքու, իրենց հաստատական այսով, 61. արժանահաւատ պատզամմը զրկեցին, ըսելով, պԲալէ, մի կենար, 62. պիտի քաշենք քու կողքից, և պիտի թշնամիներդ ջնջենքու, 63. մէկ օր, երկու օր չսպասեցի, բանակիս առջեւը չի զըննեցի, ոչ ալ նայեցայ, 64. հաեւ, չի ըըննեցի ձիերու (⁽¹⁹⁾) սարքը, լուծերու ասպազինումը, 65. և պատերազմի կազմած քը չի ճշգեցի, և ոչ ալ արշաւանքիս համար պաշար հայթայթեցի, 66. չի սարսափեցայ Եշպաթի (ամիս) ցուրտէն (ե) ձիւնէն, խիստ սառոյցէն, 67. թռչող արծուիկի (⁽²⁰⁾) մը պէս, 68. տարածեցի թներս, ոսոյններս չախչախելու համար. 69. Նինուէի ճամբէն, զժուարութեամբ և արազօրէն իջայ, 70. զիմացս, Ասանիկալազէ (⁽²¹⁾) երկրին մէջ, բոլոր իրենց հուժկու մարտիկները, 71. ճամբաս գոցեցին և սրեցին իրենց զէնքերը. 72. սարսափը մեծ աստուածներուն, տէրերուս, զգեստնեց զիրենք, և 73. (երր) տեսան վերահասութիւնը կատաղի բանակիս, կորսնցուցին իրենք զիրենք: 74. Եշթարը, բամբիչը մարտի և ճակատամարտի, որ կը զուրգուրար քահանայութեանս վրայ, 75. բազմեցաւ կողքիս, և փշրեց անոնց աղեղները, 76. տարտղնեց իրենց կազմակերպուած զօրքը, և 77. սապէս, խոսեցան իրենք իրենց մէջ. «Ոյս է մեր թագաւորը». 78. չնորհի իր վերին հրամանին, վերադասն իմ քով և եկան ետեւէս. 79. ոչխարի պէս մայեցին, խնդրեցին իշխանութիւնս. 80. Ասորեստանի ժողովուրդը, որնք երգուընցած էին, մեծ աստուածներու անունով իմ մասին, 81. եկան իմ ներկայութեանս և համբուրեցին ոտքերս. 82. զալով այդ Թշուառականներուն, ընդգուղ և ապատամբիչ, 83. (երր) լսեցին արշաւախումբիս խաղացքը, լքեցին իրենց օգնող զունդերը, և 84. ապաստանեցան անծանօթ երկիր մը: Հասայ Տիգրիսի (⁽²²⁾) թումբը, և 85. Աին, Շամաշ, աստուածներու, թումբի իշխան(ներսուն) հրամանով, 86. բովանդակ ջոկատս ընդարձակ Տիգրիսի վրայէն ցատկել տուի, որպէս թէ փոքրիկ ջրանցք մը (ըլլար ան). 87. Ատարը (⁽²³⁾) մէջ, նպաստաւոր ամիս մը, ութերորդօրը, նապուի (⁽²⁴⁾) տօնախոմբութեան օրը:

Ն Յ Թ Ե Բ

1. Բեւեռագիր բնագրին մէջ, Ասարդոն անունը, Assur - ahî - idinna(na) ձեռվ զըր-ուած է, որ կը նշանակէ . — «Աշուր (աս-տուած) եղբայր մը տուաւ» : Ցիշատակուած է նաև, Հին Կտակարանի մէջ՝ յիշուր-ՌՏԱ LXX 'Ասօրնան, 2. Թագ, 19, 27. եսայի, 37, 38. իսկ Ծաշքոննան, Ծաշքօնն, եղը. 4, 2. Տով. 1, 21. Պարզոմէսոփի կանոնագրքին մէջ, 'Առօննան, ընթերցումներով:

2. Միջագետքի հարաւ - արեւելեան երկրամասն է Սումերը. մայրաքաղաքն է Lagash այսօրուայ Telloն: Հետեւելներն են քաղաքները, Uruk, յետազային Erech, այսօրուայ Warkaն, Հին Կտակարանի ՃՐԱ LXX 'Օքէ՛, Մննդ. 10, 10. Strabonի 'Օքէ՛: Larsa, այսօրուայ Senkerehն, Հին Կտակարանի ՇԸՆԼԱՐԸՆ ՀԱՐԸՆ ԼԽԱԸՆ ԼԽԱԸՆ Ելլասար, Մնն. 14, 19. Մը, այսօրուայ El - Mukaijarն է, Հին Կտա-կարանի ՄԻԴՌ ԿՇՎԱՐ ԱՈՐ ԵԼԼԱԸՆ Խարժան շալծանա, Մնն. 11, 28, 31, 15, 7. և Nippur, այսօրուայ Nifferը: Լեզուով, մշակոյթով և արտօքին զիմազծով, սեմականէ և հնդե-րոպականէ տարրեր ցեղ մը կ'ենթագրեն այս երկրի բնակիչները՝ Սումերացիները. Paul Dhröme, La Religion Assyro - Babylonienne, Paris, 1910, էջ 2:

3. Աքքատ. մայրաքաղաքն է Agade, քաղաքներն են, Kish, Kutha, այսօրուայ Tell - Ibrahimը, Sippar, այսօրուայ Abu - Habbahն, Borsippa, այսօրուայ Birs Nimrûde, և Բաբելոնը: Մեմական է բնակչութիւնը: Պատմութեան արշալոյսէն սկսեալ, բարե-լոնական անուններ կը կրեն իրենց վեհա-պետները. յատկանչական երեսոյթ մը նոյն պէս, իրենց սեմականութիւնը հաստատող, իրենց ցեղախօսական տիպն է. տես վերո-յշեալ գիրքը, էջ 3:

4. Այս աքքատերէն ասացուածքը, mi-
git ilâni rabuti «սիրականը մեծ աստուած-
ներու» կը հանդիպնք յաճախակի, սումե-
րական և եղիպատական արձանագրութիւն-
ներու մէջ նաեւ՝ Առւմ. կի-աց dingit mesh
gal-gal-e-ne, Եղիպտ. եղակի գործածուած
որ. որ «սիրականը Աստուածոյ»:

5. Զանազան ուղղագրութիւններով հա-
սած է մեզի Աշուր անունը — A-chir, A-
shur, Ash-shur, A-usar, An-sar, այս վերջինը
Աստօնիքին մէջ արտագրուած է: Սումերա-

կան երկու զազափարանիշերէ կը բաղկա-
նայ Աշուր բառին ընթերցումը. մեր բնա-
գրին մէջ A=ջուր, և Usar=մարզագետին:
Հայտ G. Furlaniի, La Religione Babilonese-As-
sira Vol. I., La Divinità Bologna, 1928, էջ 208-209, Աշուր՝ ներկայ ընդունելութիւնն
է; կամ fa'il ձեւ աշար (վայելուչ, աղնիւ-
թլալ) աքքատերէն բային: Արդարի fa'il
համանման ձեւ յաճախ կը փոխանակուի
fa'il ձերն հետ, ասուրերէնի մէջ: Հետեւա-
րար, վայելուչ, աղնիւ, բարեացակամ պիտի
նշանակէր Աշուր, որ գերազանցապէս աղ-
զային աստուածն էր Ասորեստանցիներու:
իշխանը, պետը իր ժողովուրդին, ոգեպէս
և Փիղիքապէս զայն կենսաւորող իրակա-
նութիւնը, բիւրեղացած մարմնացումը թէ
աղգային և թէ կրօնական զգացումներու:
իսպէս սազմասէր ժողովուրդ՝ Ասորես-
տանցիները, իրենց բուռն և կատաղի ճա-
կատամարտներով՝ նշանաւոր, Աշուրի հրա-
մանով, իրենց բանակները կը յաւաշանա-
յին, կը գրաւէին երկիրներ, ամբոցներ կը
քանդէին, և խանդավառ երախտագիտու-
թեամբ կ'ընծայարերէին իրենց նուէրները
իրեն, որովհետ իրենց զինուորական պետն
էր Աշուրը, պատերազմիկ աստուած մը,
միաժամանակ զթառատ, ծաւալուն ժողո-
վրդականութեան մը տիրացած, արարիչը,
իշխանը աստուածներու: Առւմ. E-hur-sag-
kur-kur-ra «երկիրներու լերան տաճարը»
կը կոչուէր իր սրբարանը, Ասուրի մէջ: Գալսուի և նինուէի մէջ կը պաշտուէր
նաև. Առւմ. Kurgal «մեծ լեռ», աքքատ.
sadu rabu «մեծ լեռ» կ'որակուէր ան: Իշ-
թար աստուածուներն էր իր ամուսինը:

6. Արեւատուածն էր Շամաշը. սումե-
րական Ատն կամ Babbarը. բարելական բար-
բառով՝ Շամաշ կը կոչուէր, իսկ Ավագան,
Աամօս, Աամօս՝ ասուրականին մէջ, որով-
հետեւ բարելական օն և մն կը համապա-
տասխանէին ասուրական սին և ուրին.
իսկ երբայցիներու մօտ ՇՆՇ, արար. շ
ասոր. Խառա և Շաբաշ՝ Աւկարիթի Փիւնի-
կեցիներուն քոյ: Գերազանցապէս արդա-
րութեան, իրաւոնքի աստուածն էր ան,
եղեւ-դին «գատաստանի իշխանը», անփոփոխ
օրէնքներով: Վահմ զատաւորը Igigi ներու՝
երկնքի աստուածներուն, և Անոնակնե-
րու՝ երկրի աստուածներուն, և սեազլուխ-
ներու՝ սում. sag-gig-ga, իսկ աքքատ. զազգած

salmu. այս առութիւնը Համմուրապիի օրինագրին մէջ, մարդ արարածը կը մատնանէ: Զանցառողները աստուածային և մարդկային օրէնքներու, կը բանուէին Շամաշի հասագայիններէն, օրոնք ուռկանի մը կը նմանեցնէին յաճախ: Բարձրութիւնները և Խորութիւնները լուսաւորով, կինսապարզե, առիւթասիրտ հերոսն (quradu) էր ան, հել-biri ո գուշակութեան իշխան տիտղոսուած էր. Այսն էր իր ամուսինը, իսկ Keltu՝ «արդարութիւն» և Mesharū սիրաւոնք իր գոււակները: Գաղափարական զուգադիպութիւն մը, որդիներուն և իրենց հօր միջն, կը հասաւատուէր արդարն: Սում. Babbar-ki-bal-e-sa-sa ահակառակորդ երկիրներու յաղթականն է Babbarը ո արձանագրուած էր, սում. Ե-Babbar ս ծագող արիւու տուն ա անուամբ իր տաճարին, շրջապատին վրայ, որ կը բարձրանար Larsaի և Sipparի մէջ. իրեն էր յատկացուած տարւոյն եօթելորդ ամիսը, Թիշրիթը, իսկ սրբազն թուական արմէքն էր՝ քան: Գահի մը վրայ բազմած, աստուածային խոյրը զլիսուն, մօրուսաւոր, աջին՝ սկաւառակ մը և մական մը, քարկոմոզներու վրայ կը ներկայացուէր յաճախ: M. Jastrow, Die Religion Babylonien und Assyriens, Giesen, 1905, էջ 220–222, G. Furlani, La Religione Babilonese Assira, Vol. I., La Divinità, Bologna, էջ 162–169, E. Dhorme, Les Religion de Babylonie et d'Assyrie, Paris, 1945, էջ 60–67.

7. Սում. En-lil կամ En-lil-lá ս փոթորիկի իշխան ա կը կոչուէր, որմէ կ'աքքատանար լլ.-լի կամ լլ.-լի-լ ձեւը որ իր կորցին Damasciusի Ալլուօչին հետ կը նոյնանար, իսկ լլ.-լ արամական արձանագրութիւններու մէջ, Mulliլը, սումերական Eme-sal բարբարին յատուկ ընթերցանութիւն մըն էր: Յունական Բնիոս էր: Են «աէր» բարեկական համապատասխան աստուածն էր En-lilի, այս բարդ բարին, միայն նախագաս Եղին թարգմանութիւնը Ըլլալով, մինչդեռ երկրորդը՝ լլ.ը, աքքատ, սար զագլու ս սաստիկ հոգ անոր սկզբանական նկարագիրը կը բնորոշէր: Սում. Iugal ama-ru աքքատ, սար ասու «հեղիղի թագաւոր» կ'որակուէր: Հարաւային Սումերիոյ մշակութային կեզրոն Nippur քաղաքին մէջ, Ե-Կու «Լիրան տուն»ը՝ իր տաճարը կը բարձրանար: Իր սրբարանը,

սում. E-am-Kur-Kur-րա, աքքատ, են ընտատի սերկիրներու ցավայրին տունը» կը կոչուէր, Սուուրի մէջ: Nin-lil ս փոթորիկի տիրինոն էր, իր ամուսինը: Են կամ Ելլի ս տիրուէր, իշխանուէր» կը կոչէին զայն աքքատները, Սում. Nun-nam-mir ս չքիւթեան իշխան անվեհեր առզմիկը, ընու ս ցլավայրին էր Պէլը, իրեն էր յատկացուած, տարուայ առաջին ամիս, Նիսանը, սրբազն թուականն էր յիսուն, համաստեղութիւնը՝ մեծ առջն էր: Սում. ամար, աքքատ: ասսի և հեղեղ ան էր, իր զլիսուոր զէնքը. En-lil յատուկ անունէն ածանցուած, ոլլի՛ տէր, իշխան, և Ոլլի՛ տէրութիւն, իշխանութիւն, հասարակ անունները կը պարունակէր աքքատերէն բառարանը, ինչ որ կ'ապացուցանները, En-lilի գերազանցապէս, տէր, իշխան, Ըլլալու հանգամանքը, վերոյիշեալ սղբիւները համառօտագրուած խորագիրներով. M. Jastrow RBA, էջ 235–236, G. Furlani, RBA, էջ 116–122. E. Dhorme, RBA, էջ 20–31:

8. Nabium, Nabuu, Nabie, ս ւզգագրութիւններով կը գրուէր իր անունը. Nabou աան որ կը կանչէ, կ'աւետէ, աւետարար կը թարգմանուի, կամ աւելի ճիշտ սան որ կը փայլիս նկատի ունենալով իր նմանեցումը Հերմէս մոլորակին հետ, զոր Յոյները կը կոչէին Հերմէս Տէ՛ննայ՝ փալուն E. Dhorme, RBA, էջ 251: Արտագրուած է իր անունը Հին Կտակարանի մէջ հիտեալ ձևով ՀՀ ԼXX Նեխա, իրրե բարեկական աստուած, Եսայի, 46.1: Իրրե լեռ, երկ. Օրի. 32.49: Իրրե քաղաք, թուոց 32.3: Եսայի 15.2: Իսկ N. B. ս ւզգագրութեամբ, արամական արձանագրութիւններու մէջ: Սում. երկու գաղափարանչերէ կը բարեկանայ, Nabou բառը, PA և AG. Գաւազան, ցուպ, մական, աքքատ. «Hattu» կամ «qan dupper» կը նշանակէ Բան. Իսկ «ընել» աքքատ, ըպէշու կը նշանակէ AGը: Գիրի, գրականութեան աստուածն է գերազանցապէս Nabouն: Անմրցակից զրագէտը աստուածներու nashi dup simati ս աստուածներու ճակատագիրներու կրողն է ան. Iskim-tel կ'կեանքի մարգարէն խմասութեան աստուածն էր. dupsar gimri «տիեզերքի գրագէտն է ան: Գիրի ս տեղծիչէլը, արձարձին էր, իրեն վերապահուած էր մարզոց, աստուածներու ճակատագիրները,

որոշել: Տասն էր իր սրբազան թիւը: Ե-շ-դա շյամիտենականութեան տունը» կը կոչուէր իր տաճարը, Borsippaթ մէջ: Nanna, Nana էր, սումերեական անունը իր ամուսնոյն, յաւհարէն Նարա, Նառ, արամական արձանագրաթիւններու Ն. ո՛ւ. ը., խկ աքքատ. Tashmetum «Լուսում», իմացութիւն» shemu արմատէն, որ կը նշանակէ լսել, ունինդրել, իմանալ, նոյնաբէս երը. Սահ, արար չ, առոր. առա, ուկ. shm', հետօվալ. samea, եղիպ. սժմ. զպ. պօհ. սօթէմ սահ. ֆայ. սօթմ: Ան էր Borsippaթ թագուհին, bēlit rāmī «Հնորդքի աստուածուհին» M. Jastrow, էջ 238—239, G. Furlani, 235—243:

9. Թէ սիրոյ և թէ պատերազմի ասաւածուհին էր ան. Esh-dar, Gesh-dar, ուղղագրութիւններով կը զրուէր իր անունը: Innina, Innini, Innin, Ninni, Nin, Irnina, համ Irnini, Կանուանէին զայն սումերեացինները, կը համապատասխանէր ան Ա. Գրական դրդացք LXX Աստաբու 1. թագ. 11.5.33. 2 թագ. 23.13.1. Սամ. 31.10., հարաւ-արաւական Դրդոց են, որ արու ճանչցուած էր, եղիպտական սրիւարիին: Ամենէն զրաւէչ և զիւթիչ իգական զէմքն էր ան, առուրաբելական Պանդէսոնին, այն աստիճան որ Ishtar կը նշանակէր պարզապէս աստուածուհի: Արուսիական էր իր աստղը, սում. Dil-bat, Հեղիքիուսի Ճեւքուտ. արու կը ներկայացնէր, իրքն առաւօտեան աստուածուհի, խակ էզ, իրքն զիշերուան: Esh-nan և երկնքի սունո կը կոչուէր իր տաճարը, Urukի մէջ, որ կը նկատուէր պերճազիճներու քաղաքը: քանի որ Ishtar, թէ ընտանիկան և թէ պիղդ սիրոյ աստուածուհին էր: Աղջիկն էր լուսին-աստուածոյ, և քոյրը արև-աստուածոյ և գժոխքի աստուածուհին: ասրելունի մէջ, իր տաճարը E-tur-kalama «հրկին փարախը» կը կոչուէր. կը պաշտուէր Նինուէի և Արգելայի մէջ. ինչպէս որ կը լիշտառակէ միք բնազիրը զերազանցապէս պատերազմիկ աքքա: զարիտ անվեհները աստուածուհի մըն էր Նինուէինը, խկ պատերազմներու չուրչ, զուշակութիւններ կ'ընէր Արգելայինը, երազներու մէջ գալով: M. Jastrow, RBA, էջ 214—218, G. Furlani, RBA, էջ 169—180. E. Dhorme, RBA, էջ 67—68.

10. Աւր և Խարրան քաղաքներուն մէջ, կը պաշտուէր Սինը՝ լուսին-աստուածը:

Եռ-շն աճանաչումի տէրըն էր, իր սումերական սկզբնատափալը, որ յաճախ շրջուած կը կարդացուէր իրրե շու-ը որ որմէ Ա.քքատերէն Սինը, Հեղիքիուսի Ծոյը, սինը արամական արձանագրութիւններուն: Nanna և երինքի մարդոն է իր սումերեական երկրորդ յորջորջումը, զոր առուրա-բարելական Nannarին վերածեցին աքքամանիրը, որ գլուխաւոր աստղը կը նշանակէ. Ա.քք. namaru, nawaru պլուսաւորիչ» բայարմատէն, նոյնակս Ուկ. ոյր, Երբ. ՐՋ լամբ: Bēl-agî «պսակի իշխանոն էր ան. գահի մը վրայ բազմած, սաքերը բապիկ, մօրուսաւոր, չորս եղջերու իր խոյրով, անոր վերի լուսնի մահիկով մը կը պատեհերացուէր յաճախ. իրքն ալեհներ, պատկառազգու էին իր վճիռները, որովհետեւ ան էր եղ-պուսսե ովհիաններու իշխանը». մահիկն էր իր խորհրդանիշը, օրերու, ամիսներու, տարիներու, իշխանն էր ան. իր զանազան երեւոյթները, մեծ կարեւորութիւն կը ներկայացնէին, որովհետեւ զերազանցապէս լուսնային էր առուրա-բարելական տոմարը: Սում. E-kish-pu-gal, կամ E-gish-shir-gal «Իհծ լոյսի սուն» կը կոչուէր իր տաճարը Ա.քք. մէջ, խկ Սում. E-gipar Ա.քքատ. bit gipari պաշտի տուն» կը կոչուէր իր տաճարը մէջ. իր սրբազան թիւն էր երեսունը: Սում. Nin-gal «մեծ տիկին» կը կոչուէր իր ամուսինը. և լուսական արձանագրութիւններու մէջ: M. Jastrow RBA 229—230, G. Furlani, RBA, էջ 153—162, E. Dhorme, RBA, 54—60:

11. Բնագրին մէջ բնիւր զրուած է, Սում. սկին, որ հաւաքոյթ կը նշանակէ:

12. Բնագրիրը ունի սլ-ի-մա reshi¹⁴-ia պլուխներս բարձրացուց»:

13. Արոտումի «rimi», անձրեկի «zunni», կայծակի «birqi», և փոթորիկի «mehje», առոտուածն էր Adad կամ Addu, Addi, Dada և Ramman, որմէ յունական Ράμας, Ράμαντας, Iskur կը կոչէին զայն սումերեացինները, որ կը զրուէր սում. Անձրեկի, «փոթորիկ», որոտումս նշանակող զաղափարանչանով, որ կը գործածուէր, նմանապէս, քանանական պա՛ալը և Խուրրիթ թէշուուզը մատնանչելու, Անձրեկի, աղքիւններու, զետերու, բերբիութեան աստուածն է, Adadը, Gu-gallu «մեծ ցուլ» մըն էր ան, միաժամանակ իշխանը բանդազուշանքի «bel birio»: իր աստղն էր, սում. Nu-mush-da «որեկ-

հան ձուկը գոր աքքատները shagimu շմանչողը կը կոչէին. զիցն էր իր սըբազան թիւը, և Շասպիթու իր ամիսը. Շալան էր ամուսինը, հաւանարար խուրրիթ ծագուժք: Bit karkara, Dilbatի, Borsippaի, Kishի, Sipparի, և Shurrapakki մէջ կը պաշտուէր ան, M. Jastrow, RBA, 222-223; G. Furlani, RBA էջ 227-235; E. Dhorme, RBA, էջ 96-102.

14. Tenu, աքքատերէն են փոխել բարձրատէն:

15. Mar-Duk, Mar-du-ku, Ma-ru-duk, գերազան ասուուածն էր բարելական Պանդէռնին: Յիշատակուած է նաև Հին Կտակարանի մէջ, ՀՃՐԹ LXX Մշանձու, Մասձայ, Մարածչը, 2 թագ. 20, 12. Եսայի, 39, 1. երեւ. 1, 2. իրրե ածական ՄՃՇԿ ԼXX Մածոցան, եզր. 2, 2. Նեե. 7, 7: Եսթ. 2, 5: Մարծուք Բերօսի մօս: Արամական արձանագրաւթիւններու ՀՃՐԹ. Mar-duk բառին ստուգարանութիւնը, գիտականօրէն չէ ստուգարանուած ատակաւին: Բարելոնի թէ ազգային, թէ կրօնական, և թէ զինուորական պեսն էր. որդին էր Եաի, ելափուտիւնը երգումներու և զիւթանքներու, արարիչը իմաստութեան բան նուզոյ, mushim simati և կ'որոշէր ան ճակատագիրները, մարզոց և ասուուածներու, նոր տարուայ տօնախմբութեան առթիւ. թիամար շմարմացեալ քառասին հետ, ունեցած իր մարտին մէջ, նուանեց զայն, և ստեղծեց մարզը: Բարելոնի մէջ, E-sag-il սրարձը զիսով տունը կը կոչուէր իր տաճարը, որ ունէր իր շուրջը, E-temen-an-ki և երկնքի և երկրի հաստատութեան տունը կոչուած աստիճանաւոր աշտարակը, տասն էր իր սրբազան թիւը, և Siwan իր ամիսը: Ցարանիթու սործաթափայլըն էր իր ամուսինը, որուն անունը աղճատուած էր Ասուրի մէջ, զէր բանիւ սիրմ ստեղծազ և ձևին տակ, երկնքի և երկրի մեծ իշխանուհին էր ան, կ'ընկերանար Մարդուն, նոր տարուայ տօնախմբութեան: G. Furlani, RBA, էջ 198-207, E. Dhorme, RBA, էջ 232-235:

16. Բնազրին մէջ, առաջին մասը այս տողին՝ Աշուր shar ilâni rim-nu-u մէր Mar-duk. Thompson rim-nu-u զթառատ ածականը, որտկուած կը թարգմանէ շար թագուոր զայտականին հետ, սապէս. — Ashur, the merciful king of the gods, Ոչ մէկ պատճան կը տեսնենք այսպիսի աեղափոխութեան մը, այլ կը թարգմաննենք իրենց բա-

ռաշարքին համաձայն՝ Աշուր, թագաւորը աստուածներու (և) զթառատ Մարդուզը, նոյնպէս, Theo Bauer, Zu Ashur, dem göttlichen König, und dem mitleidvollen Marduk, Zeitschrift für Assyriologie, XL II (NF VIII) էջ 173.

